ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան «02» հոկտեմբերի 2020թ.

ՀՐԱՄԱՆ № 46-Ա[1]

ՀԵՐՄԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԲԼԲՈՒԼՅԱՆԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ4-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Հերմինե Բլբուլյանի անձնական դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հերմինե Սուրենի Բլբուլյանին 2020 թվականի հոկտեմբերի 5-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ4-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի պետ Անի Վիրաբյանին:

3. Հ. Բլբուլյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ
(պարտականությունները կատարող)